Պողոսյան պարտեզներ
BOGHOSSIAN GARDENS
BOGHOSSIAN FOUNDATION

**Հասցե՝ ք. Երևան, 0019, Մարշալ Բաղրամյան 21,**
**հեռ.՝ +374 11 966868, էլ. փոստ՝ info@bg.am, կայք՝ www.bg.am**

**Պողոսյան պարտեզները հանդիսանում է ուրբանլաբի և Պողոսյան հիմնադրամի համատեղ ծրագիրը, որի շրջանակներում իրականացվում է Երևանի Սիրահարների այգու շահագործումն ու զարգացումը:**

# Երևանի Սիրահարների այգու տարածքում միջոցառումների անցկացման ԿԱՐԳ

Պողոսյան պարտեզները հանդիսանում է ուրբանլաբի և Պողոսյան հիմնադրամի համատեղ ծրագիրը, որի շրջանակներում իրականացվում է Երևանի Սիրահարների այգու շահագործումն ու զարգացումը: Ծրագրի նպատակն է քաղաքային կանաչ տարածքների ստեղծմանն ու պահպանմանը զուգընթաց իրականացնել մշակութային նախագծեր, որոնք միտված են հանրային այգին դարձնել էլ ավելի ակտիվ ու սիրված վայր բոլոր երևանցիների և Երևանի հյուրերի համար:

Երևանի Սիրահարների այգու տարածքում միջոցառման կազմակերպման ցանկության դեպքում անհրաժեշտ ներկայացնել հայտ և ստանալ Պողոսյան պարտեզների գրավոր թույլտվությունը:

**Միջոցառման անցկացման թույլտվության տրամադրման պայմանները ձևավորվում են ներքոնշյալ հինգ չափորոշիչների հիման վրա.**

1. միջոցառման ուղղվածությունը,
2. մասնակիցների նախատեսվող քանակը,
3. միջոցառման նպատակը (շահույթ հետապնդող կամ չհետապնդող),
4. միջոցառման համար անհրաժեշտ տարածքը (այգու ամբողջ տարածքը կամ մասնակի),
5. այգու կանոնների խախտման հնարավորություն:

Երևանի Սիրահարների այգում միջոցառում կազմակերպելու թույլտվության ստացման գործընթացը սկսվում է առցանց հայտադիմումի լրացումից, որը հասանելի է հետևյալ հղմամբ (ինչպես նաև PDF ձևաչափով): Խորհուրդ է տրվում հայտն ներկայացնել միջոցառումից 30 աշխատանքային օր առաջ:

Հայտը ստանալուց հետո Պողոսյան պարտեզները պարտավորվում է 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր կերպով (հայտում նշված էլ. փոստի հասցեով) տեղեկացնել հայտատուին իր որոշման մասին: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ լրացված հայտը դեռևս չի երաշխավորում միջոցառման թույլտվությունը: Հայտը կարող է ընդունվել, մերժվել կամ վերադարձվել ոչ ամբողջական լինելու պատճառով: Ամբողջացվելուց հետո, հայտը կրկնակի քննվում է նույն ժամկետներում ու պայմաններում:

Լրացված հայտի հիման վրա հայտատուն պարտավոր է “Հավաքների ազատության մասին” ՀՀ օրենքի դրույթներին ու պահանջներին համապատասխան իրազեկել Երևանի քաղաքապետարանին նշված միջոցառման անցկացման վերաբերյալ և ստանալ իրազեկման գրությունը քաղաքապետարանից: Վերոնշյալ գրության պատճենը պետք է ներկայացնել Պողոսյան պարտեզների գրասենյակ մինչև միջոցառման սկիզբը:

**Անհրաժեշտ հղումներ.**
Առցանց հայտադիմում
Տպագիր հայտադիմում PDF ձևաչափով
Այգու կանոնները
Հաճախ տրվող հարցեր

**Կապ մեզ հետ**
Հասցե՝ ք. Երևան, 0019, Մարշալ Բաղրամյան 21
Հեռախոս՝ +374 11 966 868, +374 55 966 868
Էլ. փոստ՝ info@bg.am

Հասցե՝  ք. Երևան, 0019, Մարշալ Բաղրամյան 21,
հեռ.՝ +374 11 966868, էլ. փոստ՝ info@bg.am, կայք՝ www.bg.am

Պողոսյան պարտեզները հանդիսանում է ուրբանլաբի և Պողոսյան հիմնադրամի համատեղ ծրագիրը, որի շրջանակներում իրականացվում է Երևանի Սիրահարների այգու շահագործումն ու զարգացումը:

# Երևանի Սիրահարների այգու միջոցառումների անցկացման գնագոյացման տրամաբանական աղյուսակ

| *Միջո-ցառման տեսակը* | *մինչև 99 մասնակից* | | | | *100-ից 499 մասնակից* | | | | *500 և մասնակից* | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *Մշակութա-յին և հասարա-կական* | **ՇՉՀ** | A | **ՇՀ** | B | **ՇՉՀ** | B | **ՇՀ** | C | **ՇՉՀ** | C | **ՇՀ** | D |
| | **ԱՏ** | B | **ՄՏ** | A | **ԱՏ** | C | **ՄՏ** | B | **ԱՏ** | D | **ՄՏ** | C |
| | **ՄՓ** | C | **ՄԱ** | A | **ՄՓ** | D | **ՄԱ** | B | **ՄՓ** | E | **ՄԱ** | C |
| | **ԿԽ** | B | **ԿՉ** | A | **ԿԽ** | C | **ԿՉ** | B | **ԿԽ** | D | **ԿՉ** | C |
| *Առևտրային և այլ* | **ՇՉՀ** | C | **ՇՀ** | D | **ՇՉՀ** | C | **ՇՀ** | D | **ՇՉՀ** | D | **ՇՀ** | E |
| | **ԱՏ** | D | **ՄՏ** | C | **ԱՏ** | D | **ՄՏ** | C | **ԱՏ** | E | **ՄՏ** | D |
| | **ՄՓ** | E | **ՄԱ** | C | **ՄՓ** | E | **ՄԱ** | C | **ՄՓ** | E | **ՄԱ** | D |
| | **ԿԽ** | E | **ԿՉ** | C | **ԿԽ** | E | **ԿՉ** | C | **ԿԽ** | E | **ԿՉ** | D |

**Հապավումներ.**
ՇՉՀ-շահույթ չհետապնդող; ՇՀ-շահույթ հետապնդող; ԱՏ-ամբողջ այգու տարածքը; ՄՏ-մասնակի; ՄԱ-մուտքը ազատ է; ՄՓ-մուտքը փակ է; ԿԽ-կանոնների խախտմամբ; ԿՉ-կանոնների խախտում չեն լինելու

Գները քննարկման ենթակա են, և կիրառվում են զեղչեր: Կարող եք կապվել info@bg.am հասցեով:

## Գնացուցակ

| *Հ/Հ* | *ծառայության անվանում* | *միավոր* | *միավորի գին ՀՀ դրամով* |
|---|---|---|---|
| **Միջոցառումների անցկացման վարձավճար** | | | |
| 1 | Կարգ A | անցկացման թույլտվություն | 50’000.0 |
| 2 | Կարգ B | անցկացման թույլտվություն | 100’000.0 |
| 3 | Կարգ C | անցկացման թույլտվություն | 300’000.0 |
| 4 | Կարգ D | անցկացման թույլտվություն | 1’000’000.0 |
| 5 | Կարգ E | անցկացման թույլտվություն | 1’500’000.0 |
| | | | |
| **Նկարահանման թույլտվություն** | | | |
| 6 | առանց այգու կանոնների խախտման | անցկացման թույլտվություն | 20’000.0 |
| 7 | այգու կանոնների խախտմամբ | տես՝ “Միջոցառումների անցկացման վարձավճար” | |

Հաստատում եմ՝ ______________________ *Ս. Պետրոսյան*
*(ստորագրություն և կնիք)* Տնօրեն